ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչության և Ռուսաստանի Դաշնության ֆիզիկական կուլտուրայի կոմիտեի միջև համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ֆիզիկական կուլտուրայի, սպորտի և երիտասարդության հարցերի վարչությունը և Ռուսաստանի Դաշնության ֆիզիկական կուլտուրայի կոմիտեն, ղեկավարվելով ֆիզիկական կուլտուրայի և սպորտի՝ որպես ժողովուրդների միջև բարեկամության ամրապնդման և փոխըմբռնման բարելավման միջոցի բնագավառում կապերի զարգացման ցանկությամբ, պայմանավորվեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կաջակցեն, կխորացնեն և կխրախուսեն համագործակցության զարգացումը փոխշահավետության հիման վրա՝ իրենց երկրների՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին օրենսդրություններին համապատասխան:

Հոդված 2

Կողմերը կիրագործեն ֆիզիկական կուլտուրայի, զանգվածային սպորտի, մարզական գիտության, բժշկության, կրթության, մարզական կադրերի և մարզական հերթափոխի պատրաստման բնագավառի մասնագետների, գիտնականների և մարզիչների փոխանակում:

Հոդված 3

Կողմերը կիրագործեն ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառում տեղեկության, փաստաթղթերի, ուսումնամեթոդական նյութերի փոխանակում:

Հոդված 4

Կողմերը կխրախուսեն գիտնականների և մասնագետների մասնակցությունը ֆիզիկական կուլտուրայի, ֆիզկուլտուրային-առողջարարական աշխատանքի և զանգվածային սպորտի հարցերին նվիրված սեմինարներին, դասընթացներին, գիտական կոնֆերանսներին:

Հոդված 5

Կողմերը կլուծեն նյութատեխնիկական և գիտական բազային վերաբերող /մարզական գույքի արտադրություն, մարզական կառույցների նախագծում, շինարարության և շահագործում, մարզական գիտության և բժշկության զարգացում/ և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

Հոդված 6

Կողմերը կնպաստեն մարզական մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության, մարզական լրագրողների փոխանակման, մարզական գրականության բնագավառում համագործակցությանը՝ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման գործում ձեռք բերված նվաճումներին իրենց հասարակայնությանը ու բնակչությանը լայնորեն ծանոթացնելու նպատակով:

Հոդված 7

Համագործակցության հաջող իրագործման նպատակով Կողմերը պայմանավորվեցին ստորագրել երկկողմ փոխանակումների արձանագրությունները, որոնք քննարկվելու և ստորագրվելու են Կողմերի կողմից նախապես պայմանավորված ժամկետներին:

Արձանագրության մասին առաջարկությունները Կողմերը գրավոր պետք է ներկայացնեն ոչ ուշ, քան ընթացիկ տարվա հոկտեմբերի 1-ը և, ըստ հնարավորության, ստորագրվեն ոչ ուշ, քան հաջորդ տարվա 1-ին եռամսյակը:

Հոդված 8

Մարզական փոխանակումը, որպես կանոն, կիրագործվի ֆինանսական հետևյալ պայմաններում՝

միջազգային ավիաչվերթը մինչև ընդունող Կողմի մայրաքաղաք և հետ՝ գործուղող կազմակերպության հաշվին,

գիշերելու, սննդի, ներքին փոխադրամիջոցի, բժշկական սպասարկման և այլ ծախսերը՝ ընդունող Կողմի հաշվին,

մարզական փոխանակման արձանագրություններում կարծարծվի «գրպանի ծախսագումարի» չափը:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման օրից, գործելու է հինգ տարվա ընթացքում և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ հինգ տարիների համար, եթե Կողմերից մեկը վեց ամիս առաջ

գրավոր չհայտնի սույն Համաձայնագրի գործողության դադարեցման մասին:

Կատարված է Մոսկվա քաղաքում 1993 թվականի հունիսի 22-ին, երկու օրինակով, հայերեն և ռուսերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի հունիսի 22-ից: